

նայ բախումներ ունենալ դասակարգային շահերէն աւելի հիմնական, աւելի կենսական շահերու համար :

Որքան ատեն որ բանուորական ու սոցիալիստական կազմակերպութիւնները սակաւանդամ եւ քաղաքականապէս աննշան, արհամարելի ուժեր էին, որքան ատեն որ կրնային անպատասխանատու դերի մէջ մնալ՝ առանց վրտանդելու իրենց հայրենի երկրի բախտը, միջազգային սոցիալիզմի դադարաբանական կառուցուածքը կարող էր պահպանել իր «գիտական» եւ «ոէալ» երեւոյթը : Սակայն, երբ ընկերվարական կուսակցութիւնները աճեցին, ծաւալուեցան եւ իրենց շարքերուն մէջ առան միլիոնաւոր անդամներ եւ այդպիսով քաղաքական շատ խոշոր ազդակներ դարձան, երբ այլեւս անոնք անկարող էին խուսափել պատմութեան վճռական վայրկեաններուն, անմիջապէս երեւան եկաւ, թէ ո՞ր աստիճան վերացական եւ ցնորական էր բոլոր երկիրներու բանուորութեանց շահերու ներդաշնակութեան գաղափարը : Մէկ ակնթարթի մէջ փուլ եկաւ բանուորութեան միջազգային եզրայրակցութեան օգային չէնքը, որ կառուցուած էր տասնեակ տարիներու ընթացքին միջազգային իդէալիստներու յամառ ջանքերով :

Եւ քանդուեցաւ այսպէս կոչուած Երկրորդ Միջազգայնականը եւ տեսականօրէն միայն իրարու հետ միացած միջազգային բանուորութիւնը պառակտուեցաւ իր բաղկացուցիչ ազգային տարրերու միջեւ :

IX

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ
ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՄԷՁ

Համաերոպական պատերազմը եւ ոռուսական յեղափոխութիւնը ոչ միայն քանդեցին բանուորութեան միջազգային միութիւնը, այլեւ պառակտեցին գործաւոր կամ «աշխատաւոր» դասակարգի ազգային կազմակերպութիւններն իսկ : Բանուորութեան դասակարգային միութիւնը չդիմացաւ պատերազմի եւ յեղափոխութեանց դաժան փորձուքեան :

Ազգերու, դասակարգերու, խմբակցու-

թիւններու, ինչպէս եւ անհատներու, հակամարտ շահերը անհամեմատ աւելի ցցուն կերպով հրասպարակ կուգան պատերազմներու եւ յեղափոխութեանց ատեն, քան խաղաղ օրերուն : Այն, ինչ որ խաղաղ ժամանակ ֆօղարկւած եւ կարողական (potential) վիճակի մը մէջ կը գտնուի, յաճախ անշարժ ու անորոշ, պատերազմական եւ յեղափոխական շրջաններու մէջ կը ստանայ շատ սուր ու որոշ դժեր եւ երեւան կուգայ իր ամբողջ բնական մերկութեամբ :

Հասարակագիտական թէորիներու եւ տեսարանական կառուցուածքներու իրական արժէքը կարելի է չափել ոչ այնքան խաղաղ օրերու ընթացքով, որքան պատերազմի եւ յեղափոխութեան հնոցին մէջ : Մինչդեռ եւրոպական ընկերաբանները եւ մասնաւորապէս ընկերվարական գաղափարախօսները գրեթէ միշտ արամադիր են նկատել խաղաղ ժամանակի երեւոյթները նորմալ, բնականոն, իսկ պատերազմի եւ յեղափոխութեան արտայայտութիւնները՝ աննորմալ, ոչ-բնականոն : Եւ, երբ խաղաղ իրականութեան յարմարեցուած իրենց վերացական տեսութիւնները օդը կը ցնդին պատերազմներու եւ յեղափոխութեանց հարուածներուն տակ, ընկերվարական գաղափարաբանները, հաւատացեալ մարդոց կոյր մոլեռանդութեամբ, կ'աշխատին մակերեսային, երբեմն սոփեստական բացատրութիւններով իրենց տեսութիւնները արդարացընել, առանց վայրկեան մ'իսկ կասկածելու, թէ այդ տեսութիւնները իրենք կրնան հիմնովին սխալ եւ վերագնահատութեան կարօտ լինել :

Ընկերվարական տեսարանները դռած են շատ դիւրին միջոց մը բացատրելու համար իրականութեան ջախջախիչ փաստերը, որոնք ադադակող կերպով յաճախ կը հակասեն «գիտական» սոցիալիստներու վերացական կառուցուածքներուն : Երբ տարրեր ազդութեանց բանուորական դասերը, «դաւաճանելով» իրենց դասակարգային շահերուն, իրարու դէմ պատերազմի կ'ելլեն, ուղղափառ ընկերվարականները կը շտապեն յայտարարելու, թէ պատճառը բանուորներու դասակարգային դիտակցութեան պակասն է : Երբ միեւնոյն ազդութեան պատկանող բանուորական զանգ-